ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Հաստատում եմ՝
Գիտական աշխատանքի
գծով պրոռեկտոր,
Ֆ-մ.գ.թ., փ.գ.դ.
Պ.Ս. Ավետիսյան _____

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Սերինե Արարատի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության մասին «Բարոյաիրավական պատասխանատվության և կամքի ազատության խնդիրը քսաներորդ դարի ամերիկյան վեպում (Թեոդոր Դրայզեր, Մարիո Պյուզո, Հարրի Գրեյ)» թեմայով Ժ. 01.07 – «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գեղարվեստական-իրավական պատումի գիտական ըմբռնման խնդիրը վաղուց ուսումնասիրվում է, մասնավորապես, Ֆ.Մ. Դոստոևսկու, Ստենդալի, Ա.Քամյուի և այլոց ստեղծագործությունների համատեքստում: Սակայն այս խնդիրը դեռ շատ նոր ուսումնասիրությունների կարիք ունի: Ս.Պետրոսյանի թեկնածուական թեզը միջառարկայական հետազոտության փորձ է, որի նպատակն է ցույց տալ կապը քրեական իրավունքի, հոգեբանական վարքագծային տեսությունների (մասնավորապես՝ բիհևիորիզմի) և 20-րդ դարի ամերիկյան վեպի միջև: Իր աշխատանքում ատենախոսն առանձնացրել է մի քանի հիմնական խնդիրներ, որոնցով պայմանավորված են նրա հետազոտության կառուցվածքը և տրամաբանությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից (84 անուն): Ներածության մեջ հիմնավորված է թեմայի ընտրությունը, ընդգծվում է արդիականությունը, որոշվում է հետազոտության առարկան, բնութագրվում է հետազոտության գիտական նորույթը, սահմանվում են հիմնական նպատակը, խնդիրները: Գլուխների բովանդակությունը լիովին արտացոլված է նրանց անվանումներում.

«Դատաիրավական համակարգի զարգացման պատմական փուլերն ու աղերսները անգլո-ամերիկյան գրականության համատեքստում»; «Բարոյաիրավական համակարգի առկայացման այլակերպ դրսևորումը 20-րդ դարի անգլո-ամերիկյան գրականության քրեական և զանգստերական վեպերում (առաջացման պատճառները, պատմական իրողությունները, հետագա ընթացքը)»; «Վարքային հոգեբանական տեսությունների և դրանցից բխող օրենքների ազդեցությունը «Ամերիկյան ողբերգություն», «Ավազակներ» և «Կնքահայրը» վեպերում: Բացի ուսումնասիրության հիմնական տեքստից, դրան կցվում է նկարագրող հավելված:

Հանցագործությունների պատմության մասին զրույցը սկսելով բառացիորեն ad ovo - Կայենի եղբայրասպանությամբ, ատենախոսն այն բերում-հանգեցնում է քսաներորդ դարի կեսերի իրողություններին՝ մանրամասնորեն անդրադառնալով հնագույն, դիցաբանական (Արթուր թագավոր) և կրոնաիրավական հասկացություններին ու նորմերին: Որպես ուսումնասիրության ավելի կոնկրետ առարկա ընտրվել են երեք ամերիկյան վեպեր՝ համապատասխանաբար Թ.Դրայզերի, Մ.Պյուզոյի և Հ.Գրեյի, որոնք համեմատվում են աշխատանքի տարբեր փուլերում՝ այս կամ այն հետազոտական խնդրի կապակցությամբ:

Ընդհանուր առմամբ, մեր առջև բազմակողմանի և ծավալուն ուսումնասիրություն է, որն, այնուամենայնիվ, առաջացնում է մի շարք հարցեր և դիտողություններ.

1. Ուսումնասիրության առաջին գլուխն ընդհանուր առմամբ ունի ռեֆերատիվ և նկարագրական բնույթ՝ ներկայացնելով դատական և իրավական նորմերը հնուց մինչև մեր օրերը: Ենթադրվում է, որ ներկայացված ակնարկն ամբողջությամբ կօգտագործվի գրական տեքստերի հետագա վերլուծության մեջ, սակայն, վերլուծության մեջ բառացիորեն երկու-երեք հիշատակումներից բացի՝ մեր սպասելիքները չեն արդարացվում:
2. Առավել զարմանալի է, որ աշխատանքի վերջում հայտնվում է նկարագրող հավելված, որը շարունակում է կրթել գիտական հանրությանն իրավական

նորմերի մշակման վերաբերյալ, սակայն ուղղակիորեն կապված չէ ուսումնասիրության հետ: Ընդհանուր առմամբ, աշխատանքին բնորոշ է կրթական պաթոսը: Օրինակ, էջ 52-ում տեղեկանում ենք, որ Նյու Յորքը գտնվում է ԱՄՆ-ում:

3. Վեպերի ընտրության սկզբունքը լիովին պարզ չէ: Եթե խոսքը մինչև 20-րդ դարակեսը գրված ամերիկյան աղմկահարույց «կրիմինալ» վեպերի մասին է, ապա ինչո՞ւ չեն ուսումնասիրվում կամ հիշատակվում Հարփեր Լիի «Ծաղրասարյակ սպանելը» կամ Թ.Կապոտեի «Սառնարյուն սպանություն» վեպերը: Սա կարելի էր բացատրել ատենախոսության ծավալի սահմանափակումներով, եթե չլիներ հղումների և հիշատակումների առատությունը, օրինակ, Արթուր թագավորի և Քամելոտի և նմանատիպ այլ կերպարների մասին, որոնք այնքան էլ շատ կապ չունեն ուսումնասիրվող թեմայի հետ:

4. Բացարձակապես անընդունելի ենք համարում հակասեմականության և, ընդհանրապես, ազգային և կրոնական սկզբունքների վրա հիմնված խտրականության դրսևորումները կյանքում և հատկապես գիտական հետազոտություններում: Մինչդեռ ստեղծագործության մեջ կարելի է գտնել այնպիսի տողեր, ինչպիսին են, օրինակ. «Մինչդեռ «Ավազակները» վեպում նկատում ենք, որ հրեաներին ոչինչ հետ չի պահում մարմնավաճառների հետ անընդհատ գործարքների մեջ լինելուց և թմրանյութերի բիզնեսով զբաղվելուց» (բացարձակ անտեսվում է, որ բացի Կորլեոնեից, իտալական մաֆիայի մյուս բոլոր պարագլուխները չեն խուսափում թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից և մարմնավաճառության հետ կապերից): Նմանատիպ հատվածներ կան նաև այլ էջերում (օրինակ, 87-ում):

5. Ատենախոսության մեջ կան որոշ անճշտություններ, ինչպես, օրինակ, այն հայտարարությունը, որ Քլայդը բռնաբարել է Ռոբերտային (էջ 90), կամ որ «խնդրո առարկա երեք վեպերում էլ հստակորեն պատկերված են կլանային

հանցավոր խմբավորումների անօրինական վարքագիծն ու սեփական չգրված օրենքներին հետևելը» (էջ 123) (չնայած այն հանգամանքին, որ Դրայզերի «Ամերիկյան ողբերգություն»-ում խոսք չկա կլանային հանցավոր խմբի մասին): Չենք կարող համաձայնել նաև այն պնդմանը, որ «Դոն Կորլեոնեի կերպարը կարծես թե Նուդլսի և Քլայդի արդեն իսկ հասուն և ծեր կերպարն է» (էջ 71)՝ հաշվի առնելով, որ խոսքը բոլորովին այլ գեղարվեստական պատկերների և տեսակների մասին է, Կորլեոնեն և Քլայդը սկզբունքորեն տարբերվում են միմյանցից, և տարիքը նշանակություն չունի:

Ընդհանուր առմամբ, չնայած մեր դիտողությունները հիմնարար բնույթ են կրում, այնուամենայնիվ, մենք առաջադրում ենք աշխատանքը հանրային պաշտպանության համար՝ համարելով, որ հետազոտողն իրավունք ունի բացատրելու և պաշտպանելու իր տեսակետը:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ռուս և համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի նիստում (գրառում N6, 14.11.2024թ.):

Ատենախոսության քննարկմանը մասնակցել են՝ բ.գ.թ., ՀՌՀ պրոֆեսոր Լ.Ս. Մելիքսեթյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն.Մ. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ն.Կ. Գոնչար-Խանջյանը, բ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Մարգարյանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
համաշխարհային գրականության և մշակույթի
ամբիոնի վարիչ, բ.գ.թ., ՀՌՀ պրոֆեսոր Մելիքսեթյան Լ.Ս.

Հաստատում եմ՝
ՀՌՀ գիտքարտուղար
բ.գ.թ. Կասաբաբովա Ռ. Ս.

15.11.2024